ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՖ-ՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան Մաքարոնին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց դեսպանին՝ վստահություն հայտնելով, որ վերջինս իր առաքելության ընթացքում կնպաստի երկու բարեկամ երկրների հարաբերությունների առավել ամրապնդմանը: Ապա անդրադառնալով երկու երկրների գործակցությանը՝ Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ ջերմ եւ սերտ փոխհարաբերությունները կշարունակեն բարի արդյունքներ բերել երկու ժողովուրդներին:

Լիբանանի դեսպանն իր հերթին մեծապես կարեւորեց երկու երկրների հարաբերությունների ամրապնդումը եւ բարձր գնահատեց այդ գործում Հայ Եկեղեցու դերակատարությունը:

Վեհափառ Հայրապետն ու տիար Ժ. Մաքարոնը խոսեցին նաեւ Լիբանանի հայ համայնքի մասին: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ ընդգծեց, որ Հայոց ցեղասպանությունից հետո Լիբանանի ժողովրդի բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ հայ ժողովրդի զավակները կարողացան կարճ ժամանակի ընթացքում Լիբանանում վերակազմակերպել իրենց ազգային, հոգեւոր-մշակութային կյանքը եւ մեծ ներդրում ունենալ երկրի կյանքի տարբեր բնագավառներում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Սեպտեմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Պերճ Սեդրակյանին: Հանդիպմանն անդրադարձ կատարվեց ազգային-եկեղեցական զանազան հարցերի:

Լիբանանի դեպան Ժան Մաքարոնին Ս. Էջմիածնում